

Հայաստանի Հանրապետություն  
Հայտերի ներկայացման հրավեր  
Միջազգային մրցութային սակարկություն  
"Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" ծրագիր  
փոխառություն. թիվ – 1673 P

**ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս, Ծովինար և Վարդենիկ համայնքների և ՀՀ Շիրակի մարզի Հոռոմ համայնքի ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում, IRFSP/CW/ICB-2016/037**

1. Հայաստանի Հանրապետությունը Միջազգային զարգացման ՕՊԵԿ Հիմնադրամից (ՄԶՕՀ) ստացել է փոխառություն "Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" ծրագիր ծախսերը հոգալու համար և նախատեսում է փոխառության գումարների մի մասը օգտագործել **ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս, Ծովինար և Վարդենիկ համայնքների և ՀՀ Շիրակի մարզի Հոռոմ համայնքի ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում, IRFSP/CW/ICB-2016/037** պայմանագրով նախատեսվող աշխատանքների դիմաց վճարումներ կատարելու համար:

2. ՀՀ կառավարության աշխատակազմի "Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ-ն հրավիրում է իրավասու և որակավորման չափանիշներին համապատասխանող կազմակերպություններին ներկայացնելու հայտեր վերոնշյալ պայմանագրով նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման համար: Աշխատանքների իրականացման ժամկետն է՝ 12 ամիս:

3. Մրցույթը կիրականացվի Միջազգային զարգացման ՕՊԵԿ Հիմնադրամի Գնումների Ուղեցույցների համաձայն՝ Միջազգային մրցութային սակարկության եղանակով: Մրցույթը բաց է Մրցութային փաստաթղթերով սահմանված իրավասու երկրների ծագում ունեցող բոլոր հայտատուների համար:

4. Շահագրգիռ և իրավասու հայտատուները կարող են ստանալ լրացուցիչ տեղեկություններ և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ստորև նշված հասցեում բոլոր աշխատանքային օրերին, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 09:00-ից մինչև 18:00:

5. Որակավորման չափանիշները ներառում են.

ա/ Վերջին երեք տարիների ընթացքում կատարած շինարարական աշխատանքների միջին տարեկան ծավալը պետք է կազմի՝ **2,262,000,000.0 ՀՀ դրամ կամ 4,753,000.0 ԱՄՆ դոլար**

բ/ որպես կապալառու պետք է ունենա փորձառություն նմանատիպ բնույթի և բարդության 1 շինարարական աշխատանքներում վերջին հինգ տարիների ընթացքում;

գ/ շրջանառու ընթացիկ միջոցներ և/կամ վարկային գծերի հնարավորություններ, այլ պայմանագրային պարտավորություններով չծանրաբեռնված՝ **377,000,000.0 ՀՀ դրամ կամ 792,000.0 ԱՄՆ դոլար:**

6. Հետաքրքրություն ունեցող հայտատուների կողմից մրցութային փաթեթը անգլերեն լեզվով կարելի է ձեռք բերել ստորև նշված հասցեում մինչև 2016թ. Սեպտեմբերի 19-ը, գրավոր դիմում ներկայացնելու և 15,000.0 ՀՀ դրամի կամ 40.0 ԱՄՆ դոլարի չափով, չփոխհատուցվող գումար վճարելու պարագայում: Նշված գումարի վճարման եղանակն է ստորև նշված բանկային հաշվին վճարումը:

7. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով մինչև 2016թ. սեպտեմբերի 26 -ը ժամը 15:00: Էլեկտրոնային եղանակով հայտերի ներկայացում չի թույլատրվում: Ուշացված հայտերը կմերժվեն և կվերադարձվեն Հայտատուներին չբացված վիճակում: Հայտերը կբացվեն անմիջապես, 2016թ. սեպտեմբերի 26 -ին ժամը 15:00-ին մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայությամբ՝ ստորև նշված հասցեում:

8. Հայտերը պետք է ուղեկցվեն Հայտի երաշխիքով, որի գումարը պետք է կազմի՝ **30,160,000.0 ՀՀ դրամ կամ 64,000.0 ԱՄՆ դոլար:**

Վերևում հիշատակվող հասցեն է.

Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ

ՀՀ, ք. Երևան, 0010, Տիգրան Մեծի 4, 6-րդ հարկ, տնօրեն Աշոտ Վարդանյան

հեռ. 37410 54 65 10 138; Ֆաքս: 37410 58 80 58; Էլ.փոստ: procurement@raed.am;

Ամերիա Բանկ ՓԲԸ, հ/հ 15700 – 11483010200 /ՀՀ դրամով փոխանցումների համար/

Ամերիա Բանկ ՓԲԸ, հ/հ 15700- 11483010701 /ԱՄՆ դոլարով փոխանցումների համար/